

պիտկոպոսներով» (27) :

1679ին, Կաթողիկոսին ժամանումը խափանուած ըլլալով, յաջորդ տարին, Սրբազան ժողովը դարձեալ կը պատրաստուի զինք ընդունելու : Այս առթիւ Քարտուղար Գերապայծաոր, Օտտարտոյ Չիպոյ, կը դրէ Հաւատոյ Տարածման Սրբազան ժողովի Կարգընալներուն . «Իրեն (Կաթողիկոսին) կը հնազանդին հայերը Լեհաստանի, Մոլտաւիոյ, Յունաստանի, Թրակիոյ, Իտալիոյ, ամբողջ Եւրոպայի, Վրաստանի, Մենկրելիոյ, Փոքր-Ասիոյ, Մեծ ու Փոքր Հայաստանի՝ մեծ մասամբ, գրեթէ ամբողջ Պարսկաստանի եւ հուսկ Արեւելեան Հնդկաստանի . . . Յարմար պիտի ըլլար որ Ս . Աթոռը Հայ Պատրիարքն ընդունէր Քահանայապետական Մատրան մէջ, վերջին կարգընալէն անմիջապէս յետոյ, կամ աւելի ցայտուն կացուցանելու համար միութիւնը՝ աչքառուտեղ մը պատրաստել տար անոր եւ իր եպիսկոպոսներուն : Թող տարօրինակ չթուի այս, այլ նկատի առնուի՝ թէ Ս . Աթոռը նոյնպէս վարուեցաւ Յոյներու հանդէպ, Փլորենտեան ժողովի ընթացքին : Այսպէս կարելի պիտի ըլլայ նաեւ փոխադարձել այն ընդունելութիւնը, զոր ինք (Կաթողիկոսը) կատարեց ի պատիւ Դոմինիկեան Հ . Փրսքոփոյին, Հայաստանի Առաքելական Պատուիրակին, որուն առջեւ իր Հաւատոյ դաւանութիւնն ը-